

ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռեզյումե գործողությունները Կովկասյան ճակատում
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը
Տետր 10: 1916 թ. փետրվարի 4-ից մինչև մարտի 14-ը *

Բանալի բառեր – Թովմաս Նազարբեկյան, Բիթլիս, Մուշ, Անդրանիկ, Սմբատ Բորոյան, Դ. Աբազիև, Ռ. Բեկգուլյանց, Ս. Զորյան (Ռոստոմ), Ռ. Տերմեն, Ա. Աթանասյան, Վ. դե Վիտ, Զ. Մդիվանի, Սասուն:

Թ. Նազարբեկյանի հուշերի այս տետրում ներկայացված ռազմական գործողությունների պատմության առավել կարևոր հատվածը Բիթլիսի (Բաղեշի) փետրվարի 18-ի լույս 19-ի (մարտի 2-3) գիշերային գրոհի նկարագրությունն է:

Դեռևս «Վէմ»-ի 2020 թ. թիվ 4-ում հրատարակված՝ Թովմաս Նազարբեկյանի հուշերի 9-րդ տետրում թռուցիկ անդրադարձ կար Բիթլիսի ազատագրման ռազմագործողությանը: Սակայն ինչպես էրզրումի ու Մուշի գործողությունների պարագայում, այս անգամ ևս իրադարձությունների ամբողջական պատկերը վերականգնելու համար Թ. Նազարբեկյանը իր հուշերի 10-րդ տետրում ավելի հանգամանորեն է անդրադարձել մեկ անգամ արդեն նկարագրված իրադարձություններին:

Մուշի ազատագրումից հետո գեներալ Դ. Աբազիևի գլխավորած զորաջոկատին, որի կազմում էր գեներալ Թ. Նազարբեկյանի զորամասը, հանձնարարված էր գրավել Բիթլիսը: Գեներալը, հաշվի չառնելով անբարենպաստ բնակլիմայական պայմանները, պարենի և անասնակերի սակավությունը և ամենակարևորը՝ հակառակորդի թվաքանակի ու սպառազինության մասին հետախուզական տեղեկությունների բացակայությունը, հրամայում է սկսել հարձակումը: 1916 թ. փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը տեղի ունեցած Բիթլիսի առաջին գրոհը ձախողվեց: Ռուսական զորքը և հայկական 1-ին դրուժինան ունեցան զգալի կորուստներ: Թ. Նազարբեկյանը ցավով արձանագրում է, թե ինչպիսի ծանր պայմաններում էին կռվել ռուս զինվորները, կազակները և հայ կամավորները: Մի պահ իրավիճակն

* Ընդունվել է տպագրության 19.04.2021:

այն աստիճանի սպառնալից էր դարձել, որ Դ. Աբացիևը մարտի էր նետել անգամ իր անձնական պահակախումբը:

Ըստ Թ. Նազարբեկյանի հուշերի՝ գրոհի սկզբում Դ. Աբացիևը սխալ էր թույլ տվել՝ չգրավելով քաղաքի վրա գերիշխող բարձունքները, որից էլ օգտվեց թշնամին: Եվ միայն համալրում ստանալուց հետո գեներալ Դ. Աբացիևը 1916 թ. փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը հանկարծակի գրոհով տիրացավ Բիթլիսին:

Գեներալ Թ. Նազարբեկյանն անդրադառնում է Բիթլիսը գրավելուց հետո գորքի իրականացրած կողոպուտի և բռնությունների դեպքերին: Նա զարմանքով արձանագրում է, որ դրանում հիմնականում մեղադրում էին հայ կամավորներին, և դա այն դեպքում, երբ քաղաք առաջինը մտել էին կազակները, հրաձիգները, իսկ ամենավերջում՝ հայ կամավորները¹: Եվ, չգիտես ինչու, փոխարքայությունում տարածում էին գտնում հայերի կողմից իրականացված «գազանությունների» մասին պատմություններ: Անաչառ լինելու համար զորավարը վկայակոչում է զինվորական քահանա Ռուբեն Բեկգուլյանցի 1916 թ. հունիսի 29-ի նամակը: Տեր հայրը, բերելով մի քանի օրինակներ, կտրականապես հերքում էր հայերի անօրինականությունների վերաբերյալ լուրերը և խնդրում էր Թ. Նազարբեկյանին միջամտել՝ այդ մեղադրանքները հիմնավորապես հերքելու համար: Իր հերթին գեներալն աշխատում էր թույլ չտալ որևէ բախում քաղաքի հայ և թուրք բնակիչների միջև:

Գեներալ Ն. Կորսունի գնահատմամբ՝ Բիթլիս քաղաքի գրավումը, որն իրականացրեց Կովկասյան բանակի ձախ թևը, հնարավորություն տվեց տիրելու դեպի Միջագետք տանող լեռնային անցմանը, և խոչընդոտելու օսմանյան 3-րդ բանակի կապը Իրաքում գտնվող 6-րդ բանակի հետ²: Էրզրումի և Բիթլիսի գործողությունները զգալիորեն թեթևացրին նաև Սուեզի ջրանցքի շրջանում ծանր մարտեր վարող բրիտանացիների դրությունը: Այս հաջողությունները դրդեցին Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային շտապ համաձայնագիր կնքելու Օսմանյան կայսրության բաժանման մասին³:

Ռուսական ստորաբաժանումներն անընդհատ ենթարկվում էին քրդական հարձակումների: Հատկապես աչքի էին ընկնում տխրահռչակ ցեղապետ Մուսա բեկի ելուզակները: Ռուսները փորձում են լեզու գտնել

¹ Այս անիթեթությունը կրկնում է գեներալ Ե. Մապովսկին. «Բիթլիսը գրավելուց հետո... Անդրանիկի հայկական 1-ին դրուժնան, որը հարձակումից առաջ թողնվել էր թիկունքում կիրճի մուտքում, առանց թույլտվության մտավ քաղաք և նրա մարդկանց մի մասը, որ Բիթլիսի բնակիչներից էին, գտնելով իրենց ընտանիքներին նահանջող թուրքերի կողմից մորթված, ներխուժեցին ամերիկյան հոսպիտալ, որտեղ հավաքվել էին մեծ թվով թուրք ընտանիքներ, որպեսզի նրանց հետ նույնպիսի հաշվեհարդար տեսնեն: Ջոկատի հրամանատարի կարգադրությամբ շտապ ժամանած հարյուրյակի կողմից անկարգությունները դադարեցվեցին, հրահրիչները ձերբակալվեցին...»: Տես **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917 г., Париж, 1932, էջ 311.

² Տես **Корсун Н. Г.**, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, М., 1946, էջ 54.

³ Տես նույն տեղում, էջ 56:

«Արևմտյան Հայաստանի սոսկ բնակիչ»⁴ քրդերի հետ՝ նրանց հետ բանակ-
ցելու ուղարկելով դիվանագիտական մեծ փորձ ունեցող իշխան Բ. Շա-
խովսկոյին, սակայն ապարդյուն: Քրդերը շարունակում էին հանդես գալ
որպես օսմանյան իշխանությունների հավատարիմ դաշնակիցներ⁵:

Թ. Նազարբեկյանի հրամանատարության տակ գտնվող Մուշի ջոկա-
տը և հայ փախստականները հայտնվել էին աղետալի վիճակում. չկար
պարեն, հատկապես հաց: Մատակարարումը գրեթե դադարել էր: Այդ
դժվարին պահին գեներալին իր օգնությունն է առաջարկում որպես Հա-
մառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի լիա-
զոր՝ Արևմտյան Հայաստան անցած Ռոստոմը (Ստեփան Զորյան): Նա Թ.
Նազարբեկյանից պահակախումբ է խնդրում լքված հայկական գյուղերում
պահված ցորենը գտնելու համար: Պայմանավորվում են, որ գտածը բա-
ժանելու են հավասարապես: Շնորհիվ Ռոստոմի՝ փախստականները և
զորքը ապահովվում են բավարար քանակությամբ հացով:

1916 թ. մարտի 8-ին ստացվում է Կովկասյան 4-րդ բանակային կոր-
պուսի հրամանատար գեներալ Վ. դե Վիտի գաղտնի հրամանը, որի ըն-
թերցումից և վերլուծությունից հետո Թ. Նազարբեկյանը եզրակացնում է,
որ իրենց դրությունն այնքան էլ կայուն չէ, քանի որ սպասվում են ծանր
մարտեր, իսկ իր կորպուսը սակավ ուժերով զբաղեցնում էր շուրջ 100 կմ
ճակատ⁶: Բացի դրանից՝ դաշնակիցները դադարեցրել էին Գալիպոլի օ-
պերացիան, և սպասվում էր, որ այդտեղից թուրքերը սկսելու են ռուս-
թուրքական ռազմաձևակառ տեղափոխել մարտերում թրծված կանոնավոր
զորամասերից մեկը՝ օսմանյան 16-րդ բանակային կորպուսի 8-րդ դիվի-
զիան⁷: Բրիտանացիները ծանր պարտություն էին կրել նաև Միջագետքում՝
Կուբ էլ Ամարայում: Ողջ մնացած զորքի հետ գերվել էր նրա հրամանա-
տարը՝ գեներալ Չ. Թաունսենդը: Ուստի ռուսական հրամանատարությունը
հարկադրված էր օգնության ուղարկել գեներալ Ն. Բարաթովի ռազմար-
շավային կորպուսը:

Օսմանյան հրամանատարության նախապատրաստությունների մասին
էին վկայում հետախուզական տեղեկությունները և հայ փախստականների
վկայությունները. Բիթլիսի ուղղությամբ առաջանում էին թուրքական գո-

⁴ Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործունը Արևմտյան Հայաս-
տանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Եր., 2016, էջ 45:

⁵ Մանրամասն տես Սահակյան Ռ., Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխար-
հային պատերազմի տարիներին, «ԲՀԱ», 2010, N 1, էջ 26-40:

⁶ Ինչպես պատերազմի սկզբում, այնպես էլ նրա ողջ ընթացքում ռուս-թուրքական ռազմաձևակառու համարվում էր
վճռական նշանակություն չունեցող ռազմաթատերաբեմ: Ռուսական բարձրագույն հրամանատարությունը սկզբ-
նապես նույնիսկ հաշտվել էր այն մտքին, որ կարելի է գրեթե ողջ Կովկասը հանձնել թուրքերին: Տես «Красный
архив» исторический журнал, т. 26, М., 1928, էջ 34. Բացի դրանից՝ 1915 թ. սեպտեմբերին Բուլղարիայի պատե-
րազմ մտնելը բարդ կացության մեջ դրեց ռուսներին: Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ
գեներալ-համարզ Մ. Վ. Վեքսելը պահանջեց նույնիսկ շտապ սեպարատ հաշտություն կնքել Օսմանյան
կայսրության հետ, հակառակ դեպքում Ռուսաստանը լուրջ խնդիրների առջև կկանգներ: Տես նույն տեղում, էջ
VI-VII:

⁷ Տես Масловский Е. В., նշվ. աշխ., էջ 336:

րամասեր և քրդական հրոսակախմբեր: Վերլուծելով ստացված հրամանը և տեղեկությունները՝ Թ. Նազարբեկյանը եզրակացնում է, որ թշնամին նախապատրաստվում է հարձակվել Բիթլիսի վրա, ուստի մարտի 13-ին Բիթլիս է ուղարկում լրացուցիչ ուժեր:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերի հայերեն թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ առանց կրճատումների: Մեր միջամտությունները ներկայացվում են ուղղագիծ փակագծերում: Բնագիրը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում:

Ռուբեն Օ. Սահակյան
Պատմ. գիտ. դոկտոր

Տետր 10

10 հոկտեմբերի, 1929 թ.
ք. Թիֆլիս

Գեներալ Աբացիևի ջոկատը շարունակում էր հարձակումը Բիթլիսի ուղղությամբ: Փետրվարի 4-ին աջ ջոկատի հրամանատար կապիտան Բոգոլավսկին հրաման ստացավ իր ջոկատով շարժվելու Լաթերով Նազիկ-Կարմուջ-Թեղուտ գյուղեր՝ Դատվան գյուղի մոտ: Ողջ ճանապարհին նկատելի էին հակառակորդի և բնակչության արագ հեռանալու հետքեր: Գյուղերը դատարկ էին, բառացիորեն ոչ մի կենդանի շունչ՝ բացի կատուններից: Նազիկում կապիտան Բոգոլավսկին գտավ միայն Կոփի կողմից եկած ջոկատը՝ Չերնոմորյան 3-րդ կազակային գնդի երեքհարյուրյակից: Ջոկատի հրամանատարությունը ստանձնեց Չերնոմորյան կազակային գնդի հրամանատար գնդապետ Ֆիլիպովը: Փետրվարի 5-ին այդ ջոկատը դուրս եկավ Նազիկից և ժամանեց Կարմուջ: Հենց այստեղ եկավ Անդրանիկի հայկական 1-ին դրուժինան Ախլաթից: Փետրվարի 6-ին ջոկատն անցավ Դատվան գյուղ (Վանա լճի արևմտյան ափին): Փետրվարի 7-ին եկավ գեներալ Աբացիևը և նրա հետ Վոլգյան 3-րդ կազակային գունդը:

Այսպիսով՝ փետրվարի 8-ին ջոկատը կենտրոնացավ Դատվան գյուղում՝ կազմում ունենալով Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 3 վաշտ 2 գնդացիներով, հայկական 1-ին դրուժինան, կազակային 2 գունդ գնդացրային խմբով և հրետանու դասակ: Այսկերպ հավաքված ջոկատն ուներ շատ ձի, իսկ որևէ տեսակի անասնակեր՝ հացահատիկ, գարի, ցորեն և չոր խոտի կտոր իսպառ չկար: Սկսեցին պլոկել այնտեղ գտնվող մենավոր ծառերի կեղևը և դրանով կերակրել ձիերին: Ձիերը սկսեցին ուտել անուրները [խամուտ] և թամբերը: Նոսր բուսականությունը հատեցին, կեղևը

պլոկեցին, կերան, սկսեցին կերակրել ծառերի ճյուղերով: Իրավիճակը դառնում էր ձգնաժամային: Փետրվարի 10-ին հրաման եկավ ողջ հեծելազորին շարժվելու Ախլաթ, որտեղ բուսականությունն առատ էր, այդ բուսականությամբ կերակրելու [ձիերին] մինչև անասնակեր բերելը: Ջոկատի դրությունը պարենամթերքի առումով գրեթե աղետալի էր: Արդեն փետրվարի 3-4-ից մարդիկ ստանում էին $\frac{1}{8}$ ֆունտ կշռող մեկական չորահաց, կար միայն մեծ քանակությամբ օրական չափաբաժնով անասնամիս, սակայն չկար ոչ մի գոլոտնիկ⁸ աղ, չկար ոչ ձավարեղեն, ոչ չորացրած բանջարեղեն, եփելու ոչ մի բան չկար, իսկ միսն առանց աղի մարդիկ չէին կարող ուտել:

Կեսօրին հայկական 1-ին դրուժինայի հետախույզները հայտնեցին, որ թուրքերը հավաքվում են Բիթլիսից Դատվան տանող ճանապարհին՝ Խանի⁹ ավերակների առջև, և պատրաստում են ձնե խրամատներ Ալամեք գյուղից մինչև Նեմրուդաղ գծով, ուստի գեներալ Աբացինը հրամայեց գումակից վերցնել անասնակեր, կերակրել հրետանու և չերնոմորցիների երեքհարյուրյակի ձիերին, իսկ Վոլգյան գնդին և չերնոմորցիների երեքհարյուրյակին շարժվել Ախլաթ:

Հեծյալ հետախույզություն կատարել անհնար էր, քանի որ ձիերը հիվանդացան աղեխիթով և սկսեցին սատկել: Փետրվարի 10-ի առավոտյան դուրս եկան երկու կազակային գնդեր՝ հետևներից քաշելով սանձած ձիերին, մարտկոցային դասակը չկարողացավ ձամփա ընկնել, քանի որ ձիերը բեռան ծանրությունից ընկան, ակների վրա նույնպես չէին կարող դուրս տանել թնդանոթը, ուժասպառ մարդիկ ստիպված եղան թոկերով քարշ տալու թնդանոթները: Կեսօրին՝ տեղաշարժի 4-5 ժամում, անցան միայն 5-6 վերստ, ավելին գնալ արդեն չէին կարող, սակայն, ի բարեբախտություն ջոկատի, այդ ժամանակ մոտեցավ ուղտերի տրանսպորտը, որը բերել էր սեղմած չոր խոտ, հացահատիկ, չորահաց, աղ, ոչ շատ ձավարեղեն և չորացրած բանջարեղեն:

Փետրվարի 11-ի առավոտյան ջոկատը հրաման ստացավ դուրս գալու Դատվանից, հարվածելու հակառակորդին և շարունակելու դեպի Բիթլիս: Ուշ դուրս եկան՝ առավոտյան ժամը 10-ին, և դաշտավայր մտնելով՝ ընկան մոտավորապես 8-10 թնդանոթների հրանոթային կրակի տակ, որոնք, ըստ դասակների, տեղակայված էին Ալամեք և Խախրև¹⁰ գյուղերի ու Խանի ավերակների միջև եղած բարձունքներին: Առաջանալով՝ նրանք հրացաններից գնդակոծվեցին Խանի ավերակների առջև գտնվող խրամատներից, ինչպես նաև ձախ թևում գտնվող բարձունքներից: Հրացանային կրակը

⁸ 1 գոլոտնիկը հավասար է 4,26 գրամի:

⁹ Իջևանատուն:

¹⁰ Ալամեք, Խախրև - Բիթլիսի շրջակայքի հայաբնակ գյուղերից:

թուրքերը վարում էին մեծ հեռավորությունից, ուստի այն գրեթե անվնաս էր:

Հրաման եղավ հակառակորդին դուրս շարտելու զբաղեցրած խրամատներից: Գումարտակը վերախմբավորվեց ըստ մարտակարգի և անցավ հարձակման Խանի ավերակների ուղղությամբ, 6-րդ գնդի գումարտակից աջ հարձակվում էր հայկական դրուժինան, իսկ ձախ՝ չերնոմորցիների հարյուրյակը: Ստիպված էին հարձակվել և՛ բացարձակապես հարթ տեղանքով, և՛ խոր ձյան միջով: Մարդիկ բառացիորեն մինչև գոտկատեղ խրվում էին ձյան մեջ՝ հագիվ ձեռքերով ոտքերը դուրս բերելով:

1600–1800 քայլ հակառակորդին մոտեցած զորաշրջային բառացիորեն դիմավորեցին հրացանային «փոթորկալից» կրակով: Զորաշրջան պառկեց ու կրակ բացեց: Դատելով կրակի խտությունից և մարտական ճակատի երկարությունից՝ կարելի էր ենթադրել, որ հակառակորդի առաջնագծում կար մինչև 5 թաբուր¹¹ 8-ից 10 թնդանոթի մոտ. հնարավորություն չկար ստույգ պարզելու նրա ուժերը, քանի որ շուտով ձյուն տեղաց, և քամի փչեց: Ձյան քողի միջով նկատելի եղավ թուրքերի մեկ առ մեկ կուտակումը մեր ձախ թևում, և զորաշրջան երկարացնելու համար մենք ուղարկեցինք չերնոմորցիների հարյուրյակ:

Աջ թևից գեկուցեցին, որ թուրքերն ուժեղացնում և երկարացնում են մարտագիծը՝ աջից շրջանցելով հայերին և, որ ողջ դրուժինան ուղարկվել է զորաշրջա և որ պահեստազորում մարդ չի մնացել: Օգնության ուղարկվեց չերնոմորցիների վերջին հարյուրյակը: Հակառակորդի հրետանին սկսեց փորձնական կրակ բացել մեր դասակի վրա և հենց մարտի սկզբում ստիպեց հեռանալ Դատվանի կողմը: Հրետակոծությունը առանձնապես մեծ վնաս չտվեց, քանի որ ձյունամրրիկը խանգարում էր [հրետանային կրակը] կարգավորողներին: Թուրքերը, ըստ երևույթին, տեսնելով իրենց թվային գերազանցությունը, հարձակման անցան Խանի կողմից գումարտակի վրա, սակայն 400–500 քայլ չհասած՝ ընկան հրացանային և գնդացրային կրակի տակ ու մնացին իրենց տեղում: Թուրքերը սկսեցին կուտակվել նոր դիրքում: Կեսօրից հետո կուտակվելով մեր ձախ թևում՝ նրանք անցան հարձակման չերնոմորցիների վրա՝ շրջառելով թևից: Չերնոմորցիներին օգնելու համար պահեստազորից ուղարկվեց կես վաշտ և գեկուցեցին գեներալ Աբացիևին ստեղծված իրադրության մասին:

Շուտով եկավ գեներալ Աբացիևի պահակախումբը, որը նա ուղարկել էր ձախ թևին աջակցելու համար: Աջ թևից գեկուցեցին, որ հակառակորդը առանձնակի համառությամբ հարձակվում է հայկական դրուժինայի վրա, որ նրանք մեծ կորուստներ ունեն և դժվարությամբ են դիմանում: Պահեստա-

¹¹ Գումարտակ:

գորից նրանց օգնության ուղարկեցին հետախույզներին և հրաձիգների դասակը: Այսպիսով՝ ամբողջ մարտական տեղամասի պահեստագործում մնաց հրաձիգների ընդամենը մեկ դասակ:

Դրությունը անկայուն էր դառնում: Ժամը երեքին հակառակորդը կրկին հարձակվեց հրաձիգների գումարտակի վրա, սակայն 200-300 քայլ առաջանալով՝ կանգնեցվեց հրացանային ու գնդացրային կրակով և նահանջեց իր խրամատները: Գեներալ Աբացիևից հրաման ստացվեց մնալու դիրքերում մինչև մուրճ ընկնելը, ապա նահանջել Դատվան: Հրացանային ու հրետանային կրակը չընդհատվեց մինչև մուրճ ընկնելը: Երեկոյան ժամը 8-9-ին գումարտակը և [հայկական 1-ին] դրուժինան հավաքվեցին և նահանջեցին Դատվան՝ առջևում դնելով պահակային գորամաս:

Կրկին մեր կողմից լիակատար քամահրանք կար հակառակորդի հանդեպ: Ճշգրիտ չիմանալով նրա ուժերը՝ մենք հարձակման հրաման տվեցինք փոքրաթիվ գորամասերով՝ փոխանակ սպասեինք Մուշից եկող համալրման հասնելուն: Միայն շնորհիվ թուրքերի անվճռականության և, ըստ երևույթին, մեր ուժերի մասին ոչ ճիշտ իմացության ջոկատը զգալի աննպատակ կորուստներից հետո, կարողացավ նահանջել:

Փետրվարի 12-ին սարսափելի ձնամրրիկ էր ուժեղ ցրտի հետ, ուստի ջոկատը որևէ գործողության չդիմեց:

[Փետրվարի] 13-ի առավոտյան մրրիկը դադարեց: Հրաձիգներից ու չերնոնորցիներից հետախույզներ ուղարկեցին, որոնք գեկուցեցին, որ թուրքերը լքել են իրենց խրամատները և նահանջել են Բիթլիսի կիրճ, որտեղ դարձյալ կառուցել են ձնե խրամատներ՝ Բաշ-խանի և ջրաղացի դիմաց՝ կիրճի մուտքին մոտ երկու կողմերի բարձունքների վրա:

Նույն 13-ի գիշերը կորպուսի հրամանատարից ստացվեց հեռագիր, որ Մուշից գեներալ Աբացիևի տրամադրության տակ ուղարկվել է Կովկասյան 8-րդ հրաձգային գունդը: [Փետրվարի] 14-ի առավոտյան գեներալ Աբացիևը ջոկատին հրամայեց Դատվանից կրկին հարձակվել, դուրս մղել հակառակորդին և ուղղվել Բիթլիս: Մի քանի անգամ թվով գերազանցող հակառակորդին չհաջողվեց դուրս մղել, սակայն, հավանաբար նա մեծ կորուստներ էր կրել, քանի որ [փետրվարի] 14-ի գիշերը թուրքերը հեռացան կիրճի խորքը, որտեղ դիրքեր գրավեցին Կամախ և Բոր գյուղերի բարձունքների երկու կողմերում:

[Փետրվարի] 15-ի առավոտյան մենք սկսեցինք մարտերով մտնել կիրճը: Այդ մարտում մասնակցություն ունեցավ մի աշխարհագորային դրուժինա, որը եկել էր փետրվարի 14-ի երեկոյան Դատվանի կողմից: Նա որևէ օգուտ չտվեց, քանի որ զինված էր ճապոնական մարտական հրացան-

ներով¹², որոնցից յուրաքանչյուրի համար ուներ միայն 120 փամփուշտ, մեծ կորուստներ կրեց և նահանջեց:

Այդ օրը շատ ուժեղ դիմադրեցին: Հայկական դրուժինան սվինային գրոհի անցավ, սակայն հետ մղվեց սվինային հակահարվածով և մեծ կորուստներ կրելով նահանջեց: [Փետրվարի] 15-ի երեկոյան մոտեցան Կովկասյան 8-րդ հրաձգային և Լաբինսկյան կազակային գնդերը: Այդ օրերի ընթացքում 6-րդ գնդի գումարտակը բավական մեծ կորուստներ էր կրել, ուստի գեներալ Աբացիևը հրամայեց 8-րդ գնդին փոխել գումարտակին, իսկ 6-րդ գնդի գումարտակին հրամայեց նահանջել Խախրև գյուղը:

Փետրվարի 16-ի գիշերը թուրքերը նահանջեցին ավելի հեռու՝ կիրճի խորքը և դիրքեր գրավեցին Սվար և Մեզրե¹³ գյուղերի գծով և Սվար ու Մեզրե գյուղերի և կիրճի բարձունքների երկայնքով:

Փետրվարի 16-ի առավոտյան Կովկասյան 8-րդ հրաձգային գունդը լաբինցիների և հայկական դրուժինայի հետ սկսեցին մարտերով մտնել կիրճը, սակայն կրկին չհաջողվեց թուրքերին դուրս մղել. այդ նույն ժամանակ 6-րդ գնդի գումարտակը շարունակում էր մնալ Խախրևում:

Փետրվարի 17-ին 6-րդ գնդի գումարտակին հրամայվեց առաջանալ Բաշ-խան¹⁴: 8-րդ գունդը կրկին հարձակվեց, սակայն հարկադրված էր նահանջել: Գեներալ Աբացիևը ռազմական խորհրդի հրավիրեց զորամասերի հրամանատարներին, որտեղ որոշվեց հակառակորդի վրա գրոհել գիշերը¹⁵ և տեղնուտեղը կազմվեց զորամասերի տեղաբաշխումը, որը հետևյալն էր՝ 8-րդ գնդի 1-ին և 2-րդ գումարտակները հրետանու հետ առաջանում են ճանապարհով, որից աջ հարձակվում է 3-րդ գումարտակը, իսկ ձախ՝ 8-րդ գնդի 4-րդ գումարտակը, 3-րդ գումարտակից հարձակվում են դեպի եկեղեցին և ապա Մեզրեից ձախ բարձունքի վրա գտնվող հակառակորդի մարտկոցի վրա հարձակվում է 6-րդ գնդի գումարտակը, 8-րդ գնդի 4-րդ գումարտակից ձախ՝ Սվար գյուղի վրա հարձակվում է հայկական դրուժինան: Հարձակման նպատակն է դուրս մղել հակառակորդին բարձունքներից և գրավել Բիթլիս քաղաքը: Նշվել էին ելման դիրքերը, որտեղ գրոհող զորամասերը պետք է տեղակայվեին գիշերը ժամը 11-ին: Հարձակումը սկսվելու էր գիշերը ժամը 3-ին:

Մթնեղուն պես զորամասերն առաջացան և նշված վայրերը հասան ձիշտ ժամանակին: Գիշերը սարսափելի ցուրտ էր, բարձունքներում փչում էր մարմինը թափանցող քամի, որից բառացիորեն արյունը սառչում էր:

¹² Նկատի ունի ճապոնական «Արիասակա» պահուսակավոր մարտական հրացանը: Սկզբնապես՝ 1914 թ. հոկտեմբերին, ռուսները գնեցին 20. 350 մարտական հրացան, 15. 050 կարաբին: Գնումները շարունակվեցին նաև հետագա տարիներին:

¹³ Սվար (թրք.), հայերեն՝ Ծվար և Մեզրե – Բիթլիսի շրջակա հայաբնակ գյուղեր:

¹⁴ Բաշ-խան – իջևանատուն Բիթլիս տանող ճանապարհին:

¹⁵ Խոսքը փետրվարի 18-ի լույս 19-ի մասին է:

Ժամը երեքին անցան հարձակման: Առաջանում էին լուռ, խոր ձյան միջով: Հասան մինչև ձնե խրամատները, որտեղ որևէ կենդանի շունչ չկար, ապա շարունակեցին առաջանալ, նկատեցին, որ հեռվում ինչ որ բան է սևին տալիս, որտեղից շուտով մեկ, երկու կրակոցներ հնչեցին: Մարդիկ, առանց որևէ հրամանի, «ուռա՛» գոռալով հարձակվեցին սև սովերի վրա, որտեղից սկսել էին կրակել: Այդ սևը 2 լեռնային թնդանոթներ էին փոքրաթիվ պաշտպանությամբ: Հրետանային սպասակազմը և պաշտպանությունը սվինահարեցին ու կանգ չառնելով շարունակեցին առաջանալ: Այդ ժամանակ ողջ ձակատով թուրքերի կողմից սկսվեց հրաձգություն: Կրկին հնչեց «ուռա՛», որը գալիս էր ներքևից՝ ձանապարհից և տարածվեց ողջ ձակատով: Մարդիկ տառացիորեն սկսեցին ձյան վրայով սեփական ձեռնասահնակներով: Բիթլիսի կողմից սկսվեց հաճախակի և անկանոն հրաձգություն: Սարսափելի աղմուկ, ձիչ, ձիերի խրխնջոց: Պարզվեց, որ թուրքերը չդիմանալով ցրտին, թողել էին դիրքերում հրետանին պաշտպանության տակ, իսկ մնացածները գիշերել էին Բիթլիսում, չենթադրելով, որ գիշերը մենք կհարձակվենք: Մի քանի թուրք սպաների հաջողվեց հավաքել փոքրաթիվ ստորաբաժանումներ, ինչպես նաև հերթապահ զորամասը, որոնք շարժվեցին մեզ ընդառաջ, սակայն անմիջապես ճնշվեցին, մի մասը սվինահարվեց, իսկ մյուսը՝ գերվեց: Սկսվեց թուրքերի իսկական փախուստը, փախչում էին ով ինչպես կարող էր: Այսպիսով՝ Բիթլիսը գրավվեց թուրքերի անհոգության և անփութության պատճառով: Այն [հաղթանակը] մեզ հեշտությամբ տրվեց: Կորուստները աննշան էին: Բիթլիսը, համաձայն տեղանքի, հյուսիսից համարվում էր անառիկ:

Բիթլիսի անառիկության մասին մի առասպել կա: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին եղել է Բիթլիսում¹⁶, մեկնելիս տեղում թողել է իր զորավարներից մեկին պատվիրելով Բիթլիսը դարձնել անառիկ: Զորավարը ճշտորեն կատարել է նրա հրամանը: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին վերադառնում էր Բիթլիսով, զորավարը նրան համառ դիմադրություն ցուցաբերեց: Մեծ դժվարությամբ Ալեքսանդր Մակեդոնացուն հաջողվեց գրավել Բիթլիսը: Երբ զորավարին նրա մոտ բերեցին, նա Ալեքսանդր Մակեդոնացուն զեկուցեց, որ ցանկացել է ճշտորեն կատարել նրա հրամանը:

Փախչողներին հետապնդելու ուղարկվեցին լաբինցիները և չերնոմորցիները: Ամբողջ քաղաքում դեռևս երկար ժամանակ լսվում էին կրակոցներ, թուրքերին դուրս էին մղում շինություններից: Առավոտյան ժամը 8-ին մեծ դժվարությամբ հաջողվեց հավաքել զորամասերը: Հրամայվեց գրավել շինությունները: Այսպիսով՝ ամեն ինչ ավարտվեց, թուրքերը փախան:

¹⁶ Պատմագիտությանը հայտնի է, որ Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստան չի մտել: Սա հավանաբար զրոյց է:

Բիթլիսի գրավման հետևանքով գերվեցին 8 սպա, 300 ասկյար. տարբեր տրամաչափի և մակնիշի 27 թնդանոթ, իր ողջ հանդերձանքով հրետանային հակային շարժապահեստ ջորիների հետ, զինապահեստ մի քանի հազար մարտական հրացաններով, հրետանային պահեստ իր արհեստանոցներով, հարյուրհազարավոր փամփուշտ, մեծ քանակությամբ վառող, համբարակային պահեստ, հոյակապ կահավորված հոսպիտալ իր բուժանձնակազմով, ինչպես նաև վիրավոր ու հիվանդ թուրքերով:

Բնակիչների մեծ մասը փախել էր, մնացել էին աննշան թվով մահմեդականներ և հայեր: Մահմեդականները հիմնականում ծերունիներ, կանայք և երեխաներ էին:

Մարդիկ գտան մեծ քանակությամբ տնային ուտելիք՝ հավկիթներ, ալյուր, շաքար, մեղր և այլ մթերքներ:

Այդ գիշերային գրոհի ժամանակ ջոկատը աննշան կորուստներ էր ունեցել: Մինչև ուշ գիշեր քաղաքի տարբեր մասերում լսվում էին առանձին կրակոցներ: Ջորամասերից ուղարկված ուժեղացված կիսավաշտերն էին զննում տները, որտեղից հաճախակի լսվում էին դիմահար կրակոցներ և սպանում էին զինվորներին: Դրանք հանձնվել չցանկացող քրդերն ու թուրքերն էին: Իհարկե, նրանք բոլորն էլ ոչնչացվեցին:

Ցավոք, Բիթլիսը չխուսափեց մյուս գրավված քաղաքների ճակատագրից: Այստեղ բռնությունները, կողոպուտները և գազանությունները տեղի ունեցան ավելի շատ ու էլ ավելի մեծ չափերով: Ջորքերը քաղաք մտան թուրքերի համար հանկարծակի: Խաղաղ բնակչությունը հանգիստ քնած էր՝ բացարձակապես չենթադրելով աղետի մասին: Ոչ միայն խաղաղ բնակչությունը, այլև կայազորի մեծ մասը հանգստանում էր անընդհատ մարտերից հետո, որոնք նախորդել էին Բիթլիսի գրավմանը:

Ականատեսների վկայությամբ՝ սարսափելի բռնություններ, կողոպուտներ և գազանություններ են կատարվել: Իհարկե մեղքը գլխավորապես բարձրագույն ղեկավարությանն է, որը պետք է այն կանխատեսեր: Քնաթաթախ կանանց քարշ տալով դուրս էին բերում անկողիններից, խլում, իսկ ավելի ճիշտ պոկում էին նրանց վրայից թանկարժեք զարդերը և բռնաբարում: Մի խոսքով, ինչպես միշտ լինում է, քաղաք ներխուժածների մեծ մասի նպատակն էր որքան հնարավոր է մեծ քանակությամբ թանկարժեք զարդեր ու փող գավթել: Բոլորից շատ, ինչպես միշտ էր լինում, կողոպուտում էին կազակները, նրանցից հետո հրաձիգները և հայկական դրուժինան, սակայն, չգիտես թե ինչու, փոխարքային հասնում էր միայն կողոպուտների և բռնությունների մասին, որոնք կատարում էին հայերը: Նման մեղադրանքը արդարացի չէր, քանի որ կողոպուտներ, բռնություններ և անօրինականություններ կատարվում էին Բիթլիս մտած բոլոր զորամասերի կողմից:

Իմ խոսքերի ճշմարտացիության համար կվկայակոչեմ մի քանի օրինակներ, որոնք մնացել են իմ հիշողության մեջ: Մարտի սկզբներին, երբ ես Մուշում էի, երեկոյան զեկույցի ժամանակ քաղաքի պարետն ինձ զեկուցեց, որ Մուշից Խնուս կազակների ուղեկցությամբ անցավ 10 բեռնակիր կենդանիներից և մեկ թրքուհուց կազմված տրանսպորտ: Նրա հարցին. «Մա ի՞նչ տրանսպորտ է», նրան պատասխանեցին. «Մա Լաբինսկյան գնդի եսաուլ Բաբիևի¹⁷ իրերն են, որոնք գրավվել են Բիթլիսում»:

Ինձ նաև հայտնի դարձավ, որ 8-րդ հրաձգային գնդի որոշ սպաներ Բիթլիսի գրոհի ժամանակ տիրել են բազմաթիվ իրերի, այդ թվում՝ նույնիսկ թանկարժեք կահույքի: Ցավոք, ես չկարողացա գտնել նրանց, քանի որ նրանք նախագգուշացվեցին, իսկ կահույքն ու իրերը շտապ ուղարկվեցին թիկունք: Այդ դիակապտությունը, ցավոք, ղեկավարությունն ինքն իր գործողություններով ակամա հովանավորում էր: Երբ մենք ապրիլի սկզբներին Բիթլիսում էինք, կորպուսի հրամանատարը իր համհարզի միջոցով դիմեց կազակներին ու հրաձիգներին, թե նրանցից որևէ մեկի մոտ կա՞ լավ գորգ: Նրանք մի քանիսը բերեցին և նա մեկը գնեց:

Այս ամենին պետք է ավելացնել, որ հայկական դրուժինան Բիթլիս է մտել մյուս գորամասերից հետո, քանի որ նրան շրջանցելով էին ուղարկել: Իհարկե, որևէ կասկած չկա, որ հայերը նույնպես կողոպտել, բռնաբարել են կանանց և նույնիսկ հնարավոր է գազանաբար ծաղրոծանակի են ենթարկել թուրքերին՝ վրեժխնդիր լինելով յուրայինների համար: Շատերի կանայք գտնվում էին թուրքերի մոտ: Այսպես՝ ինձ շատ լավ հայտնի էր, որ I դրուժինայում Անդրանիկի տեղակալ Սմբատի կնոջը Մուշից տարել էր մի թուրք և նրա հետ ապրում էր Սդերդում:

Բիթլիսի գրավումից մի քանի օր անց ես Կովկասյան բանակի հայ քահանա Ռուբեն Բեկգույանցից նամակ ստացա, որից կարելի էր եզրակացնել, թե ինչպես են բոլորը ձգտում հայերի անբարենպաստ արարքները էլ ավելի վատ տեսքով ներկայացնել:

«Մեծարգո Ֆոնա Իվանի

Առիթից օգտվելով գրում եմ Ձեզ: Նոր տարուց հետո ես եղա Բարաթոփի, 1-ին կորպուսի և Թուրքեստանյան 2-րդ կորպուսի շրջաններում: Հենց նոր վերադարձել եմ Ճորոխի երկրամասից: Գրում եմ Թիֆլիսից: Հուսով եմ, որ առողջ եք: Պատահաբար այստեղ տեսա Դոկուչանին՝ գեներալական համագգետով:

¹⁷ **Բաբիև Նիկոլայ Գավրիլի** (1887-1920) - Լաբինսկյան I կազակային գնդի III հարյուրյակի եսաուլ, զորային ավագ (1917), Չերնոմորյան I կազակային գնդի հրամանատար, գեներալ-մայոր (1919), Սպիտակ շարժման մասնակից:

Աստված տա՝ կոտեսովենք և կգրուցենք: Եթե ես հասնեմ Խնուս, այսինքն՝ մինչև ձեր կորպուսը, ապա կխնդրեմ Ձեր աջակցությունը Մուշ և Բիթլիս գնալու համար: Երբ դուրս գամ և լինեմ Խնուսում, ժամանակին ես այդ մասին կտեղեկացնեմ:

Առողջ եղեք: Սեղմում եմ Ձեր ձեռքը:
Ձեզ օրհնող քահանա Ռիուբենյան Բեկգույանց
(իմ սրտանց ողջույնները բժիշկներին և շտաբայիններին):

29.VI.1916, Թիֆլիս»²³:

Այս նամակն ինձ շատ զարմացրեց, քանի որ սովորաբար իմ շրջանում թուրքերի, քրդերի և հայերի միջև, հազվագյուտ բացառություններով, ոչ մի անկարգություն չի եղել: Ես ողջ ուժերով աշխատում էի դրանից խուսափել և բոլոր ջանքերն էի գործադրում, որպեսզի լավացնեմ հայերի և քրդերի հարաբերությունները: Բացի այդ, ես փորձով գիտեի մեր դրության անկայուն լինելը, ես նրանցից մեկն էի, որը արգելում էր բնակվել մեր մարտական գործողությունների շրջանում, իհարկե դրանով հարուցում էի հայերի դժգոհությունը:

Բիթլիսի պաշտպանության համար առանձնացվեց հետևյալ ջոկատը՝ Կովկասյան 8-րդ հրաձգային գունդը, երկու աշխարհագորային դրուժինաները, հայկական 1-ին դրուժինան, Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիոնի 3-րդ մարտկոցը, Կովկասյան 4-րդ հրաձգային բրիգադի 2 լեռնային թնդանոթները, Մունժենյան-Վլադիկավկազյան 1-ին կազակային գնդի 3 հարյուրյակ, Վոլգյան 3-րդ կազակային գնդի 1 հարյուրյակ և Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական վաշտի 1 դասակ, իսկ մնացած զորամասերը սկսեցին աստիճանաբար ուղարկվել Մուշ: [Փետրվարի] 28-ին 6-րդ գնդի գումարտակը ուղղվեց Բիթլիսից՝ Մուշ: Նրան հրամայված էր զինված քրդերից մաքրել Բիթլիսից Մուշ տանող ճանապարհը: Սկսած Չուխուր-Նորշենից²⁴ մինչև Մուշ գումարտակը փոխհրաձգություն էր վարում քրդերի հետ, նրանց դուրս մղելով գյուղերից, հրդեհելով անհնազանդ գյուղերը և նրանց քշելով դեպի լեռները:

Մարտի 3-ին գումարտակը ժամանեց Մուշ, որտեղից ուղարկվեց Չարբորխ և Կյում-կյում-վադիկ՝ միանալու իր գնդին: Իսկ Լաբինսկյան կազակային գունդը մտավ Մշո ջոկատի կազմ, ուր և անցավ գունդը:

Ցավոք, գեներալ Աբացիևը չօգտվեց իր դյուրին հաղթանակից՝ սահմանափակվելով միայն Բիթլիսի գրավումով: Նրան անհրաժեշտ էր հե-

²³ Նամակի բնագիրը տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 7: Փաստաթուղթը, որը լուսերեն է, հրապարակվել է մեր կողմից: Տես **Սահակյան Ռ.**, Ռուբեն ավագ քահանա Բեկգույանցի նամակները Արևմտյան Հայաստանում ժուսական իշխանությունների քաղաքականության մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հաս. գիտ., 2009, N 3. էջ 297-301:

²⁴ **Չուխուր-Նորշեն** - գյուղ Տարոնի Չուխուր գավառակում:

րը²⁸ չցանկանան կամավոր հանձնել, ապա խլել ուժով և այդպիսի տները ոչնչացնել, իսկ գենք կրելու ընդունակ արական սեռի անդամներին՝ գերել:

Այդ ռազմարշավն անչափ ծանր էր: Ծանապարհներ գրեթե չկային: Ստիպված էին առաջանալ արահետներով: Ուղեկցողները հայեր էին: Գյուղերը գրեթե դատարկ էին: Գտնում էին միայն ծերունիների, հիվանդների, հայ կանանց ու երեխաների, որոնք դատապարտված էին սովամահության:

Այս ռազմարշավը առանձնակի օգուտ չտվեց, քանի որ մեր հայտնվելուն պես գինված քրդերը հասցնում էին թաքնվել, իսկ իմիջիայլոց այս ռազմարշավի վրա զգալի ուժեր էին ծախսվել: Մարտի 5-ին գունդը վերադարձավ ռազմարշավից և կորպուսից ստացված հրամանի համաձայն տեղակայվեց Չարբորխի և Կյում-կյում-վադիկի շրջանում որպես 4-րդ կորպուսի պահեստագոր:

Փետրվարի 17-ին 5-րդ գնդի հետ միաժամանակ էրզրումից դուրս եկավ նաև Կովկասյան 6-րդ հրաձգային գունդը: Նա ուղիղ ձանապարհով, լեռներով, գնաց Կյում-կյում-վադիկ 7-րդ գնդին փոխարինելու համար: Կրկին ստիպված էին գումակը թողնել և ինչ որ հնարավոր էր տանել հակերով: Գունդը, ավելի ստույգ 6-րդ գնդի 3 գումարտակները Կյում-կյում-վադիկում մնացին մինչև փետրվարի 20-ը: Այդ օրը Կյում-կյում-վադիկից²⁹ գնդին հրամայվեց գրավել Կարգա-բազարը, որի ուղղությամբ գտնվում էր 7-րդ գնդի գումարտակը, որը հսկում էր Օղնուտ և Կարգա-բազար³⁰ ձանապարհները: Կարգա-բազարը գտնվում էր թուրքերի ձեռքում և առաջապահ ջոկատը կազմված էր 1 գումարտակից:

Լուսաբացին գումարտակները 2 լեռնային թնդանոթներով իջան գյուղ: Աննշան մարտից հետո թուրքերը դուրս մղվեցին և մերոնք գրավեցին Կարգա-բազարը: Գերվեցին մի քանի սպաներ և 400 ասկյարներ, իսկ մնացածը նահանջեցին Օղնուտ: Երեք օր անց 6-րդ գնդին փոխարինեց դրուժինիկների գումարտակը, իսկ փոխգնդապետ Ապակիձեն 6-րդ գնդի 4-րդ գումարտակի, 2 գնդացիների և Չերնոմորյան կազակային գնդի 2 հարյուրյակների հետ առաջացավ դեպի Օղնուտ: Այդ քաղաքը գրավվեց [Ապակիձեի] ջոկատի կողմից, որը սկսեց հետապնդել Չոլիկ լեռան ուղղությամբ նահանջած թուրքերին: Մնացած 2 գումարտակները 2 լեռնային թնդանոթներով ուղղվեցին Կյում-կյում-վադիկով Չարբորխ, որտեղ գնդի

²⁸ Զինված քրդերի թիվը հասնում էր 10-ից 12 հազարի: Տե՛ս **Սահակյան Ռ.**, Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2007, N 1-2, էջ 49:

²⁹ **Կյում-կյում-վադիկ**, թրք.՝ **Kümükm Vadisi**, իմա **Գյուզումի** (Կյումկյում) կամ Վարդոյի հովիտ՝ Բիթլիսի վիլայեթի վարչական կենտրոն Գյումգյումի շրջանում:

³⁰ **Օղնուտ, Կարգա-բազար** - գյուղեր Բիթլիսի վիլայեթի Ճապաղջրի գավառում: Օղնուտը Գյոյնուքի (Գինեկ) գավառակի հայաբնակ կենտրոնն էր: Երկրորդը նույն գավառակի գյուղերից էր, հայերեն՝ նաև Դարդաբազար:

հրամանատարը բերեց անվավոր գումակը: Այստեղ՝ Չարբորխում, գունդը մնաց կորպուսի պահեստագորում:

Ամենադժվարին խնդիրը ջոկատներին պարենով մատակարարումն էր, որը հատկապես սուր էր Մուշում: Համբարակային ծառայությունը գրեթե ոչինչ չէր բերում: Զորամասերը պետք է իրենք հնարամտություն ցուցաբերեին ուտելիք հայթայթելու համար: ԹՎում էր, թե մեկ ամսվա ընթացքում համբարակային ծառայությունը կարող էր այդ գործը քիչ թե շատ գլուխ բերել: Առատ էր միայն միսը, քանի որ կային մեծ թվով եղջերավոր անասուններ:

Բարդ էր նաև փախստականների պարենի հարցը: Նրանց թիվն օրեցօր աճում էր: Ճիշտ է, Մուշում կային քաղաքների միության ներկայացուցիչներ, որոնք ներդնում էին ամեն միջոց, սակայն իրական ոչ մի բան չէին կարողանում անել: Ցավոք, ես էլ չէի կարող որևէ օգնություն ցուցաբերել, քանի որ զինվորները ևս մեծ կարիքի մեջ էին: Մոտակա սննդակայանը բացված էր Խնուսում, ուր հասնելու համար հարկավոր էր գնալ երեք-չորս օր:

Ինչպես զորքերի, այնպես էլ փախստականների համար այդ ծանր պահին ինձ մոտ Մուշ եկավ Քաղաքների միության³¹ անդամներից Զորյանը³², որը ինձ խնդրեց տալ պահակախումբ՝ գտնելու գյուղերում թաքցված ցորենը և գարին: Ես հաճույքով համաձայնեցի, սակայն մի պայմանով՝ հացահատիկի կեսը նա տրամադրելու է զորքերի համար: Նա հաճույքով համաձայնեց:

Մուշում եղած ողջ ժամանակ ես կորպուսի շտաբին հաղորդում էի, որ պարեն չկա, որի հետևանքով զորքերը նեղություն են կրում: Սակայն, հավանաբար, իմ զեկույցներին որևէ ուշադրություն չէին դարձնում, չնայած բավական ժամանակ էր անցել և միշտ էլ հնարավորություն ունեին տրանսպորտով որոշ քանակությամբ պարեն հասցնել:

Հացահատիկի փնտրտուքի հետ կապված աշխատանքները շատ հաջողությամբ էին ընթանում: Զորյանը ոչ միայն փախստականներին հաց էր տալիս, այլև Խնուս գնացողներից յուրաքանչյուրին ապահովում երեք օրվա հացով:

³¹ **Քաղաքների միություն** - (ձգրիտ անվանումն է՝ «Всероссийский союз городов» («Համառուսաստանյան քաղաքների միություն»), հիմնվել է 1914 թ. օգոստոսի 9-ին: «Համառուսաստանյան քաղաքների միություն» և «Չեմստվային միություն» («Земский союз», հիմնվել է 1914 թ. հուլիսի 30-ին) - (ձգրիտ անվանումը՝ «Всероссийский земский союз») կազմակերպությունները 1915 թ. հուլիսի 10-ին միավորվել են և կոչվել «Չեմստվային և քաղաքային միությունների միացյալ կոմիտե» - «Չեմգոր» («Объединённый комитет земского и Союза городов»): Միացյալ կազմակերպության նպատակն էր օգնել բանակին մատակարարելով պարեն: Կազմակերպությունն ուներ իր մասնաճյուղը Կովկասում, որը զխավորում էր Ալ. Խատիսյանը: Ռուսական բանակի գրաված շրջաններում իրականացրել է վերականգնողական և գյուղատնտեսական աշխատանքներ: Լուծարվել է 1918 թ. հունվարին Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի ղեկնետով:

³² **Զորյան Ստեփան** (Ռոստոմ, 1867-1919) - ականավոր քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիրներից: Պատերազմի ժամանակ հանդիսացել Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի բաժանմունքի լիազորը և հիմնական գործունեությունը ծավալել է երգրում: Տե՛ս **Սահակյան Ռ.**, Նորահայտ վավերագրեր Կարինում Ռոստոմի և հայ բարեգործական ընկերությունների 1916 թ. գործունեության մասին, «Վեժ», 2010, N 4, էջ 195-204:

Մի քանի օր անց կորպուսի հրամանատարից ստացա հետևյալ հեռագիրը. «Դուք հեռագրում եք, որ հաց չկա, իսկ, իմիջիայլոց, ձեր հայերը Խնուս են գալիս՝ ունենալով երեքից վեց ֆունտ հաց»: Դրան ես պատասխանեցի, որ եթե գինվորներն առ այսօր հաց ունեն, ապա դրա համար անհրաժեշտ է շնորհակալ լինել հայ փախստականներին, որոնք այն գտնում և կիսում են ինձ հետ³³:

Բիթլիսյան ջոկատը առայժմ ապրում էր թուրքերից խլվածով: Հացահատիկի որոնման ժամանակ պահակախումբը անսպասելիորեն հանդիպում էր քրդերի և թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված սարսափելի գազանություններին: Ես պահակախմբերի պետերից շատ զեկուցագրեր ունեի, որոնք ես ուղարկում էի Վան՝ ամերիկյան ներկայացուցչին, ինչպես նաև այդ գազանությունների լուսանկարները Ա. Աթանասյանի³⁴ հետ: Ինձ մոտ պատահաբար պահպանվել է այդ զեկուցագրերից մեկը. «Ջոկատի հրամանատարին, 16 մարտի 1916 թ., ցերեկվա ժամը 3, N 15:

Ս. թ. մարտի 10-ին ես, որպես պահպանություն՝ գնացել էի կերահայթայթման և հացահատիկ հավաքելու Դեյրուկ³⁵ գյուղը: Ճանապահին մտա Ախչան³⁶ գյուղը, որի զննման ժամանակ հայտնաբերեցի երեք հրդեհված մարագներ առնվազն 200 անխացած մարդկային դիակներով: Դեյրուկ գյուղում իր ընտանիքի միակ ողջ մնացած հայը պատմեց ինձ, որ դրանք հայերի ոսկորներն են, որոնց քրդերն ու թուրքերը քշել են մարագ, ապա մարագը հրդեհել: Զատուրյադ³⁷ պրապորշչիկ Ուդովիցա»:

Մարտի սկզբներին Բիթլիսից Մուշ եկավ Անդրանիկն իր մի քանի մերձավորների հետ: Պարետից տեղեկանալով այդ մասին՝ ես այցելեցի նրան և մանրամասներ հարցրի Բիթլիսի գրավման մասին: Տեղեկանալով, որ նա գնում է Թիֆլիս, ես հարցրի, թե ով կարող է նրան փոխարինել դրուժինայի հրամանատարի պետի պաշտոնում: Նա ինձ պատասխանեց, որ ոչ ոք: [– Հարցրի]՝ նշանակում է դրուժինան պետք է լուծարե՞լ, որին նա պատասխանեց. «Այո»:

Ես ապշած մնացի նման պատասխանից: Ապա նրան, որպես տեղանքին քաջածանոթ, հարցրի, անհրաժեշտության դեպքում ինչպես կարելի է ա–

³³ Նշենք, որ որոնողական և այլ աշխատանքները շարունակվեցին ԿՀԲԸ-ն Հայկական կենտրոնական կոմիտեի Խնուս-Մուշի շրջանի լիազոր Կարո Սասունու կողմից: Տես **Սահակյան Ռ.**, Կարո Սասունու զեկուցագրերը Տարոնի հայության վիճակի մասին, «ՎԷՄ», 2010, N 2, էջ 185-199:

³⁴ **Աթանասյան Աշոտ** (1870-1941) - հասարակական, քաղաքական գործիչ, գյուղատնտես, խմբագիր և հրատարակիչ, երգիծաբան (Սալ-Ման, Ստորակետ, Վարժապետ և այլն): Հիմնադրել է «Աշխատանք» և «Նոր աշխատանք» շաբաթաթերթերը: Ա. Սահակյանի հետ հիմնադրել է «Գյուղատնտես» մասնագիտական հանդեսը: Պատերազմի տարիներին մի շարք բարեգործական և հասարակական ընկերությունների կողմից գործողվել է Արևմտյան Հայաստան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար: Համագործակցել է հայկական և ռուսական մի շարք պարբերականների հետ: Հեղինակ է պատմական պիեսների «Ջրվեժ» և «Սևան»:

³⁵ **Դեյրուկ**, ձիշտ ձևը՝ **Դերիկ**, պատմ՝ **Աշտիշատ** - Մշո գավառի հայաբնակ հիմնվուրց գյուղերից՝ Արածանու ավիին:

³⁶ **Ախչան**, նաև՝ **Աղջան** - Մշո գավառի հայաբնակ խոշոր գյուղերից, պատմ՝ Ողական ամրոցի մոտ:

³⁷ Ռուսական բանակում աշխարհագրոսիսի սպա, որը չունեի սպայական կոչում, սակայն զբաղեցնում էր սպայական պաշտոն:

Կորպուսով մեկ ստացվեց հրաման. «Գաղտնի, N 40: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրաման N 20, 6 մարտի 1916 թ.: Ք. Խնուս: Քարտեզը՝ 6 վերստանոց, թուրքական:

Բանակի հրամանատարը կարգադրել է դեպի Յավի՝ դեպի արևելք՝ Փաշա-Փունար-դաղ լեռից հյուսիս ուղղության ապահովումը դնել առաջին կորպուսի վրա, որի ձախ թևի սահմանը հանդիսանում է Փաշա-Փունար-դաղ լեռը ներառյալ:

Ինձ հանձնարարված է Փաշա-Փունար-դաղ լեռից հարավ, թուրքերի կողմից դեպի մեզ եկող բոլոր ուղիների հսկումը և ապահովումը: Դրա համաձայն՝ իմ կորպուսի N 19 (գաղտնի) հրամանում արված փոփոխությունների հիման վրա հրամայում եմ.

1) Գեներալ Յուրկևիչի ջոկատին, որը կազմված է երկու աշխարհագրային դրոմիաններից, լեռնային 4 թնդանոթներից և Սունժենյան-Վլադիկավկազյան 3-րդ գնդի երեք հարյուրյակներից և սակրավորների մեկ դասակից՝ ա) տեղակայվել Չիֆթիկ³⁹ գյուղի շրջակայքում, ամրապնդել Նորիկ⁴⁰ Վիրոն-Շախի-Շոբնիկ-Սուֆլա գյուղերի ճակատի դիրքերը՝ համառորեն պաշտպանելու էրզրումի մատույցները Փաշա-Փունար-դաղ լեռից հարավ, 2) մերձակա հետախուզությունը կատարել Քղիի ուղղությամբ Աման-դարասիի երկու ափերով և 3) հաստատուն կապ պահպանել առաջին կորպուսի ձախ թևի՝ գեներալ Աբացիևի ջոկատի հետ:

Բ) Գեներալ Աբացիևի հեծելազորը, որը կազմված է Չերնոմորյան 1-ին գնդից, Կիզլյար-Գրեբենսկյան գնդից և Սունժենյան-Վլադիկավկազյան 3-րդ գնդի 3 հարյուրյակներից առաջանալ Չըռ-Օղնուտ-Նորիկ գիծը, կատարել հետախուզություն Խարբերդի ուղղությամբ, հյուսիսում սահմանափակվելով Աման-դարասի գետով, հյուսիս-արևմուտքում՝ Կելաչ-դարասի⁴¹ և Բոյուկ-սու, իսկ հարավ-արևելքում՝ Եփրատ գետերով:

Հետախուզական հարյուրյակներին անպայման հասնել մինչև Քղի-Չոլիկ-Ղարիբ գծին:

Բ) Մուշի ջոկատի կազմում նշանակված է Չեռնամորյան 3-րդ գնդի ոչ թե երեք, այլ չորս հարյուրյակ: Գեներալ Նազարբեկովին կարգադրում եմ առաջին իսկ հնարավորության դեպքում դեպի Գենջ ուղարկել երեք զորատեսակներից կազմված ջոկատ և գրավել այդ բնակավայրը:

Գ) Գնդապետ Նոսկովի և Բիթլիսի ջոկատների կազմը և խնդիրները մնում են առանց փոփոխության:

Դ) Ընդհանուր պահեստազորում երեք հարյուրյակների փոխարեն թողնում եմ Չերնամորյան 3-րդ գնդի երկու հարյուրյակներ:

³⁹ Ղատելով տեքստից՝ Բիթլիսի վիլայեթի Ճապաղջրի գավառի կենտրոնն է, որը կոչվել է նաև **Չևիկ** կամ **Չոլիկ**: **Նորիկ**, նաև **Նորեկ** - հայաբնակ գյուղ Բիթլիսի վիլայեթի Գենջի գավառի Սանաշքութի գավառակում:

⁴¹ Ճիշտ ձևը՝ **Կիչ-դարասի**:

Իսկականը ստորագրել է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դե-Վիտը:

Իսկականի հետ ձիշտ է – շտաբի պետ, գեներալ-մայոր Մդիվանի»:

Այս հրամանի հիման վրա ես մարտի 8-ին հետևյալ կարգադրությունն արեցի. «Հրաման: Գեներալ Նազարբեկովի ջոկատ: Քարտեզը թուրքական 5 վերստ դյույմում, ռուսականը՝ 10 վերստ դյույմում:

N 9, ք. Մուշ, 1916 թ. մարտի 8, երեկոյան ժամ 9:

1) Հակառակորդի վերաբերյալ տեղեկությունները նույնն են, ինչ որ N 8 հրամանում: Դրանից ավելի՝ ա) Մամախաթունը⁴² գրավվել է գեներալ Նիկոլանի ջոկատի կողմից, որը համառ մարտեր է մղում այդ քաղաքից հարավ, բ) Աշկալայի մոտ և Բաբերդի ուղղությամբ հակառակորդը փոքր ինչ հետ է մղվել, կանգ է առել և ամրացնում է դիրքերը:

2) Մեզանից աջ գտնվում է Կովկասյան 1-ին կորպուսը, որը զբաղեցնում է նույն տեղամասը: Նրան հանձնարարված է ապահովել Յավիից ձգվող տեղամասը և նրա տեղամասը տարածվում է մինչև Փաշա-Փունար-դաղ լեռը ներառյալ:

3) Մեր կորպուսին հանձնարարված է դիտարկել և ապահովել թուրքերի կողմից դեպի մեզ եկող Փաշա-Փունար-դաղ լեռից հարավ բոլոր ճանապարհները:

4) Գեներալ Յուրկևիչի ջոկատը, որի կազմը տրված է N 8 հրամանում, կարգադրված է՝ տեղակայվելով Չիֆթլիկ գյուղի շրջանում ամրացնել դիրքերը Նուրի-Վիրոն-Շահի-Մուֆյա ճակատում՝ համառորեն պաշտպանելով Էրզրումի մատույցները Փաշա-Փունար-դաղ լեռից հարավ, մերձակա հետախուզությունը կատարել Քղիի ուղղությամբ Ալման-դարասի գետի երկու ափերով և հաստատուն կապ պահպանել 1-ին կորպուսի ձախ թևի և գեներալ Աբացիևի ջոկատի հետ:

5) Գեներալ Աբացիևի ջոկատը, որի կազմը ներկայացված է N 8 հրամանում, առաջադրանքը նույնն է ինչ որ N 8 հրամանում, սակայն հեծելազորին հրամայված է առաջանալ դեպի Չրո-Օղնուտ-Նորիկ գիծը, հետախուզել Խարբերդի ուղղությունը՝ սահմանափակվելով հյուսիսում Ալման-դարասի գետով, հյուսիս-արևմուտքում Կելաչ-դարասի և Բոյուկ-սու, իսկ հարավում Եփրատ գետերով, իսկ հետախուզական հարյուրյակներին անպայման հասնել մինչև Քղի-Չալիկ-Ղարիբ գիծը:

6) N 8 հրամանում նշված ընդհանուր պահեստազորը տեղակայված է նույն տեղում, բացի Չերնամոլյան 1-ին կազակային գնդի 1 հարյուրյակից: Գնդապետ Նոսկովի ջոկատի կազմը և խնդիրը տրված են N 8 հրամանում:

⁴² Մամախաթուն- Էրզրումի վիլայեթի Դերջանի գավառի կենտրոնը:

7) Իմ հրամանատարության տակ գտնվող ջոկատի կազմը նույնն է, ինչ տրված է N 8 հրամանում, սակայն Մուշի ջոկատին կարգադրված է նաև ապահովել Սուլուխի մոտ Եփրատի գետանցումը և առաջին իսկ հնարավորության դեպքում Գենջ ուղարկել երեք զինատեսակներից կազմված ջոկատ և գրավել այդ բնակավայրը:

ա) Մուշի ջոկատ՝ գնդապետ Պոլտավցև.

Կովկասյան 7-րդ հրաձգային գունդ 4 գումարտակ, 8 գնդացի,

Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 4 լեռնային թնդանոթ,

Չերնամորյան 3-րդ կազակային գունդ 4 հարյուրյակ,

Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական վաշտ 1 դասակ:

Ընդամենը՝ 4 գումարտակ, 8 գնդացի, լեռնային 4 թնդանոթ և 1 դասակ:

ա) Ամրացնել և հակառակորդի հարձակման դեպքում համառորեն պահպանել Կոզմա-դաղ, Կուրտիկ-դաղ-Խաչարա-սու լեռնաշղթաներով լեռնանցքներում և Դիարբեքիից Խարբերդ ու Խարբերդից Եփրատի ձախ ավիով գտնվող դիրքերը: Հետախուզությունը դեպի Խարբերդ կատարել Եփրատի ձախ ավիով և դեպի Դիարբեքի- Գենջ-Փունարով դեպի Կոմ:

Հնարավորության դեպքում Գենջ ուղարկել երեք զորատեսակներից կազմված ջոկատ և գրավել այդ բնակավայրը: Ապահովել Սուլուխի մոտ գետանցումը Եփրատի վրայով: Կապ պահպանել գեներալ Աբացինի ջոկատի հետ:

բ) Գնդապետ Օբրագցովի Բիթլիսյան ջոկատը.

Կովկասյան 8-րդ հրաձգային գունդ 4 գումարտակ, 8 գնդացի,

292-րդ և 594-րդ աշխարհագրային դրուժինաներ 2 գումարտակ,

հայկական 1-ին դրուժինա 1 գումարտակ,

հրաձգային-հրետանային 4-րդ բրիգադի 4 թնդանոթ,

Սունժենյան-Վլադիկավկազյան 1-ին գնդի 3 հարյուրյակ,

Վոլգյան 3-րդ կազակային գնդի 1 հարյուրյակ,

Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական վաշտի 1 դասակ:

Ընդամենը՝ 7 գումարտակ, 8 գնդացի, 6 թնդանոթ, 4 հարյուրյակ և սակրավորների 1 դասակ:

բ) Ամրանալ և հակառակորդի հարձակման դեպքում համառորեն պաշտպանել Բիթլիսյան կիրճը և այն շրջանցող ճանապարհները:

Առանձնացնել 2 վաշտեր և հայկական դրուժինան և նրանց տեղակայել Բիթլիս-Մախուբանկ-Մուշ և Կադիլջոս-Կիլոնկ-Նոկ գյուղերի ճանապարհների խաչմերուկում: Թույլ չտալ հակառակորդի ներթափանցումը Կադիլջոսի ճանապարհով Մշո դաշտ, որի համար ընտրել համապատասխան դիրք Ջոր-կա գետի աջ ափին:

Արևմուտքում հետախուզությունը կատարել մինչև Ջոխ-Սդերդ գիծը կապ պահպանելով Վանի ջրկառուցի հետ:

7) Հրետանային շարժապահեստներին գտնվել մարտկոցներին կից:

8) Ջրկառուցի բժշկին բաշխել սանիտարական հաստատությունները և տրանսպորտը:

9) Շտապ զեկույցներն ուղարկել առավոտյան ժամը 8-ին և երեկոյան ժամը 8-ին:

10) Ես կլինեմ Մուշում:

11) Տեղակալներն են՝ գնդապետ Օբրագցովը և գնդապետ Պոլտավցևը: Իսկականը ստորագրել է ջրկառուցի հրամանատար, գեներալ-մայոր Նազարբեկովը:

Վավերացրել է շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, Գլխավոր շտաբի գնդապետ Պոլտավցևը:

Ուղարկվել է 1916 թ. մարտի 8-ին, երեկոյան ժամը 9-ին»:

Կորպուսային N 20 հրամանից մի քանի օր անց ստացա կորպուսի հրամանատարից հետևյալ ղեկավար ցուցումը. «Հույժ գաղտնի, իր սեփական ձեռքը: 8 մարտի, 1916 թ.: Քարտեզը՝ ռուսական և թուրքական 5 վերստանոց:

Նկատի ունենալով բանակի հարձակողական գործողությունների հետագա ծավալումն ու զարգացումը՝ բանակի հրամանատարը կարգադրել է բոլոր միջոցները ձեռնարկել մեր կողմից զբաղեցրած դրությունն ամուր պահելու համար՝ շահավետ դիրքերում ամրանալով և դրանք համառորեն պաշտպանելով: Հակառակորդի զգալիորեն գերազանցող ուժերի հարձակման և Մշո դաշտը մեր ձեռքերում պահելն ամբողջապես անհնարին լինելու դեպքում, **միայն Ձեր անձնական տեղեկության համար** անհրաժեշտ եմ համարում մատնանշել հետևյալը.

1) Գնդապետ Օբրագցովի ջրկառուցին, որին հանձնարարված է պաշտպանել դեպի Ալաշկերտի հովիտը տանող ճանապարհները և կասեցնել հակառակորդին համընթաց դիրքերում, նահանջել դեպի Սանջան՝ ուժերի մի մասն առանձնացնելով Կլիչ-Գյադուկի լեռնանցքի պաշտպանության համար: Սանջանի մոտ և Կլիչ-Գյադուկում ջրկառուց պաշտպանվելու է **մինչև վերջին ծայրահեղությունը**՝ ապահովելու համար բանակային պահեստազորի զորամասերի ազատ ելքը Ալաշկերտի հովտից դեպի Դուրթախ: Նահանջելիս ոչ մի դեպքում չկորցնել շփումը հակառակորդի հետ, և նրա հարձակումը դադարելու դեպքում անմիջապես անցնել ակտիվ գործողությունների՝ իր վրա գրավելով որքան հնարավոր է հակառակորդի մեծ թվով զորքեր: Բիրթլիսի ջրկառուցի մեջ մտնող նախկին Ոստանի ջրկառուցի զորամասերը պետք է նահանջեն Վանա լճի հարավային ափով:

2) Բիթլիսի կողմից Մշո դաշտ հակառակորդի թափանցման դեպքում Կիլոնկի շրջանում՝ Բիթլիս-Մախուբանի ճանապարհին տեղակայված ջուկատը պետք է նահանջի դեպի Նոկ-Գյալառաշ-Մոզ-Շեյխի կամուրջ՝ կապ պահպանելով գնդապետ Օբրագցովի և Մուշի ջոկատների հետ և կասեցնի թուրքերին շահավետ դիրքերում. Շեյխի կամուրջի մոտ համառորեն պաշտպանվել Եփրատի ձախ ափին, իսկ ծայրահեղ դեպքում ոչնչացնել կամուրջը և նահանջել աջ ափը՝ պաշտպանելով Կարա-Քյոփրի ուղղությամբ:

3) Բիթլիսի մոտ թուրքերի ձեղքման և Մուշի վրա միաժամանակյա ճնշում գործադրելու դեպքում Մշո ջոկատը նահանջում է հյուսիս՝ Ալի-Գեդիլի մոտ գտնվող Եփրատի գետանցումը, որտեղ կամուրջ կկառուցվի: Նահանջելիս կապ պահպանել դեպի Շեյխի կամուրջ նահանջող զորայան հետ, իսկ Մուլուխի մոտ գտնվող կամուրջը պայթեցնել:

Բոլոր գորաայունների պետերի գործողությունների հիմքում պետք է լինի ժամանակ շահելը, որն անհրաժեշտ է բանակային պահեստագործի մոտենալու համար: Այս ղեկավար ցուցումը գործադրել միայն դրա մասին իմ հատուկ հրամանը ստանալուց հետո: Դե Վիտ»:

Կորպուսի հրամանատարի այս ղեկավար ցուցումից կարելի էր եզրակացնել, որ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի դրությունը այնքան էլ կայուն չէր: Կորպուսը գրավում էր 80-100 վերստ ճակատ և իր ընդհանուր պահեստագործում ուներ մի ինչ-որ երրորդ հերթի կազակների երեք հարյուրյակ, բացի այդ ամենից՝ թիկունքն անվտանգ չէր մեծ թվով քրդերից, որոնք ձգտում էին օգտագործել մեր ամեն մի փոքրիկ վրիպում: Չնայած մարտական տեսակետից կորպուսի այդպիսի երերուն վիճակին՝ կորպուսի հրամանատարը ողջ ժամանակ ձգտում էր ակտիվ մարտական գործողությունների՝ հետախուզությունից լավ տեղյակ լինելով, որ թուրքերը Էրզրումի անկումից և մեր զորքերի դեպի Երզնկա, Մուշ և Բիթլիս առաջանալուց հետո սկսել են եվրոպականից փոքրասիական ճակատ տեղափոխել իրենց փորձառու զորքերը, որոնք ազատվել էին Գալիպոլիի⁴³ պաշարումից հետո: Բիթլիսի և Մուշի ջոկատների դրությունը այնքան էլ անուր չէր, բայց հատկապես՝ Բիթլիսինը:

Չնայած մեր բոլոր ջանքերին՝ մենք ոչ մի կերպ չկարողացանք Մշո դաշտն ազատել զինված քրդերի հարձակումներից, որոնք ելուզակախմբերով իջնում էին լեռներից և հարձակվում՝ Բիթլիսի ջոկատին սպառնալով թիկունքից: Չուխուր-Նորշեն, Մառնիկ և Խասքոյ⁴⁴ գյուղերում տեղակայվեցին աշխարհագրային դրուժինաներ: Բացի դրանից, քանի որ

⁴³ 1915 թ. փետրվարից մինչև 1916 թ. հունվար Անտանտի երկրները, գլխավորապես Մեծ Բրիտանիան, նախաձեռնեցին Դարդանելի կամ Գալիպոլիի օպերացիան, որն ավարտվեց անհաջողությամբ: Այն նպատակ ուներ գրավել Կ. Պոլիսը և բացել ծովային ճանապարհը դեպի Ռուսաստան:

⁴⁴ Մշո գավառի **Խասպոլ** (**Խասգեղ**) ավանը:

քրդերի հարձակումները հաճախակի դարձան, երբեմն զգալի ուժերով, Բիթլիսի ջոկատի պետը աշխարհագրային դրուժինաներին օգնելու համար ուղարկեց հայկական 1-ին դրուժինան:

Կորպուսի հրամանատարը հրամայեց Բիթլիսի ջոկատին կազմել զինուժի երեք տեսակներից կազմված առանձին ջոկատ՝ Բիթլիսի կիրճով դեպի Խան ու Սղերդ անցնելու համար:

Ջոկատը կազմվեց 8-րդ գնդի 2 գումարտակներից, 2 լեռնային թնդանոթներից և սունժենցիների երեք հարյուրյակներից, որը գլխավորեց 8-րդ գնդի եռանդուն փոխգնդապետ Եգուպովը: Մարտի 12-ին ջոկատը կենտրոնացվեց Սուրեմե գյուղում:

Եգուպովի ջոկատի առաջխաղացումը թեթևացնելու նպատակով Բիթլիսի ջոկատի հրամանատար, գնդապետ Օբրագցովը հրամայեց գնդապետ Դոլգովին՝ իր դրուժինիկներով, 2 լեռնային թնդանոթներով և կազակների մեկ հարյուրյակով մարտի 13-ին հարձակվել Ավրադան⁴⁵-Շեյխանի վրա: Բացի դրանից, Կարպ⁴⁶ գյուղում տեղակայված ջոկատից 292-րդ աշխարհագրային դրուժինայի պետի կողմից հետախույզներ ուղարկվեցին Խոշտի ուղղությամբ:

Բիթլիսից 50 վերստ հարավ-արևմուտք գտնվող Մոտկան գավառակից փախած հայերը հայտնեցին, որ մարտի 10-ին Դիարբեքիից Թոզվանք, որը գտնվում է Խաշկից 20 վերստ հարավ, նրանք տեսել են 1000 ասկյարների 1 թնդանոթով, որոնք աջակցելու են Մուսա բեկի քրդերին: Մյուսներն ասում էին, որ նրանք գնում են դեպի Կարպ և Բիթլիս՝ կանոնավոր զորամասերի հետ համատեղ գործելու համար, որոնք հարձակվում են Զիարեթի⁴⁷ կողմից, երկրորդները լսել էին իրենց քուրդ տերերից, որ [մարտի] 10-ին Դիարբեքիից Զիարեթ են մտնեցել 15-16 հազար ասկյարներ լեռնային 6 թնդանոթներով և 12 գնդացիներով: Զիարեթից թուրքերը քրդերի հետ իբր մտադրված են հարձակվել Բիթլիսի վրա: Մուսա բեկի քրդերի հետ միասին իբր գործելու են Հայրաթի քրդերը:

Մուսա բեկի քրդերի ակտիվ գործողություններից և փախստական հայերի ցուցմունքներից հետևում էր, որ Բիթլիսի ջոկատի դրությունը ավելի ու ավելի է բարդանում, ուստի ես, չնայած թուլացնում էի Մուշի ջոկատը, մարտի 13-ին ուղարկեցի փոխգնդապետ Գապոնովի հրամանատարությամբ 7-րդ գնդի երկու գումարտակ լեռնային 2 թնդանոթներով Մշո դաշտով Բիթլիսին օգնության՝ այդ ջոկատին հանձնարարելով ցրել հովտում գտնվող զինված քրդերին:

⁴⁵ Ենթադրելի է, որ Բիթլիսից արևելք գտնվող Ազնվածորի (Գյոզալդարա) գավառակի Քարուկան գյուղանվան աղավաղումն է:

⁴⁶ Կարպ, նաև՝ Կարթ - Բիթլիսից արևելք գտնվող Ազնվածորի (Գյոզալդարա) գավառակի գյուղերից:

⁴⁷ Զիարեթ - գյուղ Բիթլիսից հարավ գտնվող Մոտկանի գավառում:

Չուխուր-Նորշենում գտնվող 292-րդ դրուժինայի վաշտը մաքրելով Չուխուր-Նորշենից հարավ գտնվող գյուղերը՝ քրդերին քշեց լեռները: Վերջինները դիրքավորվելով [լեռան] գագաթին՝ կասեցրին մեր վաշտի հետագա առաջխաղացումը: Քրդերը թվով 350 էին: Երեկոյան վաշտը վերադարձավ Չուխուր-Նորշեն:

Փոխգնդապետ Եգուպովը տեղեկացրեց, որ Կասր գյուղից փախած հայերը հայտնեցին, որ այդ գյուղում կան մոտ 5000 ասկյարներ թնդանոթներով, սակայն թնդանոթների թիվը ստույգ չգիտեին: Զավչեզուր գյուղում նույնպես կան 5000 ասկյարներ:

Մարտի 13-ին փոխգնդապետ Եգուպովի ջոկատը առավոտյան ժամը 5-ին դուրս եկավ Սուրեմեյից⁴⁸ Խան-Սղերդ ուղղությամբ, իսկ փոխգնդապետ Դուգովի ջոկատը շարժվեց առավոտյան ժամը 7-ին: Բացի Եգուպովի և Դուգովի ջոկատներից՝ Բիթլիսի ջոկատի պետի կողմից փոքրիկ ջոկատ ուղարկվեց նաև Խիզան⁴⁹ գյուղ: Այդ ջոկատի պետից ստացվեց գեկուցագիր, որ Խիզան գյուղը գրավվել է, իսկ հակառակորդը փախել է Սղերդ, և որ ինքը ջոկատի հետ հետախուզում է Մադալ-Մարջան, Խիզան-սու և Մոկս ուղղությունը:

Մշո դաշտում՝ Կոտնիի⁵⁰ մոտ շուրջ 100 քրդեր գրավել են [լեռան] գագաթը:

Եկած փախստական հայերը, որոնց ուղեկցում էին երեք քրդեր, որոնց վստահելի լինելու մասին երաշխավորում էր Խվիբիերում⁵¹ գտնվող հայկական դրուժինայի վաշտի հրամանատարը, նրան հայտնեցին, որ Մուսա բեկի մոտ 1000 քրդերը մտադրված են հարձակվել մեր զորամասերի վրա և գրավել Չուխուր-Նորշեն-Խասքոյ ճանապարհները, որը ենթադրվում է, որ լինելու է այս գիշեր, այսինքն՝ մարտի 13-ին, և որ Մուսա բեկի ետևից գալիս են ասկյարները, սակայն որքան է նրանց (հակառակորդի - Ռ. Ս.) թիվը և ունեն արդյոք հրետանի՝ տեղյակ չեն:

Արդեն մարտի 13-ին քրդերը 50-60 խմբերով գրավեցին Նոկից⁵² հարավ-արևելք մինչև Աոզուր⁵³ գտնվող բարձունքները և անցան հարձակման, սակայն Մառնիկից ուղարկված մեր զորամասերի կողմից հետ շարժվեցին Նոկից: Կեսօրին փոխհրաձգությունը դադարեց: Քրդերը շարունակում էին զբաղեցնել նշված բարձունքները:

Բիթլիսի ջոկատի պետը քրդերի ձեռքումը թույլ չտալու համար հետևյալ միջոցները ձեռնարկեց՝ բոլոր զորահանգրվանակետերի պետերին

⁴⁸ **Սուրեմե** - Բիթլիս քաղաքից հարավ, Բաղիշոջրի աջ ափին գտնվող **Սուրիմ** գյուղը:

⁴⁹ **Խիզան** - ձիշտ ձևը՝ **Հզու** կամ **Խազու**, Բիթլիսից հարավ-արևելք Տասիկ գավառակում:

⁵⁰ **Կոտնի**, նաև՝ **Գոտնի** - գյուղ Տարոնի Չխուր գավառակում՝ Մեղրագետի ակունքների շրջանում:

⁵¹ **Խվիբիեր**, մի քանի տող ներքև գրված է **Խվիեր**, որը **Խվներ** տեղանվան թրքա-քրդական աղճատումն է: Գտնվում էր Մշո գավառի հարավ-արևելքում:

⁵² **Նոք**, **Նորք** - գյուղ Տարոնի արևելյան Չխուր գավառակում:

⁵³ **Աոզուր** - **Ավզուտ** գյուղի անվան աղճատումն է: Գյուղը գտնվում էր Տարոնի հարավ-արևելքում:

հրամայեց հատկապես աչալուրջ լինել, քրդերին թույլ չտալ մտնել Մշո դաշտ: Հատկապես աչալուրջ պետք է լիներ Մառնիկում տեղակայված 292-րդ դրուժինայի պետը: Այդ ժամանակ նրա ենթակայության տակ էր անցել հայկական դրուժինայի մեկ վաշտ, որը գտնվում էր Խվիերում: Բացի դրանից, հայկական դրուժինան մնաց Մառնիկի շրջանում, իսկ հետո զգուշավորության համար հետախույզների մի մասը, հրաձիգները առաջ քաշվեցին դեպի Բաշ-խան:

Սղերդի ուղղությամբ՝ Սուրենյից փոխգնդապետ Եգուպովի ջոկատը առավոտից մինչև երեկոյան ժամը 7-ը հարձակվում էր կիրճով: Հակառակորդը գրավել էր կիրճը՝ Քղիի երկու կողմերում: Նրա ուժերը շուրջ 2 վաշտ ասկյարներ էին, քրդերի հետ: Հակառակորդի կողմից զբաղեցրած բարձունքները և կիրճը պատող, այսպես ասած, պատերն այնքան բարձր էին, որ դրանք հաղթահարելու համար ժամեր էին պետք, իսկ մի բարձունքից հետո մղված հակառակորդը զբաղեցնում էր ուրիշները, հավանաբար թարմ զորամասերով, քանի որ մեր առաջնալիս հակառակորդը նկատելիորեն ավելանում էր և հայտնվում արդեն անցած բարձունքների թևերում ու թիկունքում: Հակառակորդը համառորեն դիմադրում էր: Մեր կորուստները՝ վիրավորվել և վերքերից մահացել էր 8-րդ գնդի պրապորշչիկ Իվան Մակարի Բունինը, վիրավորվել էին 11 հրաձիգներ, 3 ձի և սպանվել էին նույնպես երեք ձիեր: Հրետանին բացարձակապես հնարավոր չէր օգտագործել կիրճի սարսափելի խորության և ոլորապտույտ լինելու պատճառով: Ցերեկը բացարձակապես հնարավոր չէր վիրավորներին տարհանել, քանի որ ջոկատի թիկունքը ողջ ժամանակ կրակի տակ էր: Եգուպովի ջոկատը գիշերեց ձորում՝ չհասնելով Քղի:

Փոխգնդապետ Դոլգովի ջոկատը առավոտյան 7-ից մինչև երեկոյան 5-ը փոխհրաձգություն էր վարում: Նա առաջացավ և գրավեց Սակը⁵⁴: Նրա դեմ կռվում էին մոտ 2 [թուրքական] վաշտեր քրդերի հետ, որոնք զբաղեցնում էին Սակի դիմաց գտնվող գերիշխող բարձունքները: Մեկ դրուժինիկ սպանվեց:

Խոշտի⁵⁵ ուղղությամբ Կարպից առաջացած հետախույզությանը գնդակոծեցին Թերալիք գյուղից: Դրուժինիկների մի խումբ՝ 30 դրուժինիկ, որոնք նույնպես ուղարկվել էին Կարպից, Թերալիք գյուղի մոտ գտավ հավանաբար քրդերի կողմից զբաղեցրած խրամատներ:

Մշո դաշտում հայկական դրուժինայի երկու վաշտերը ցերեկվա ժամը 2-ին հասան Վերին Մառնիկ՝ հետ մղելով քրդերին Չիգակա-Ջարքեթ⁵⁶:

⁵⁴ **Սակ** - Բիթլիսից արևելք ընկած Ազնվածոր (Գյոզալդարա) գավառակի հայաբնակ գյուղերից:

⁵⁵ **Խոշտ - Խարթ (Խարդ)** գյուղանվան աղավաղումն է: Խարթը գտնվում էր Ազնվածոր (Գյոզալդարա) գավառակում Բիթլիսի արևելակողմում:

⁵⁶ **Չիգակա-Ջարքեթ** ձիշտ ձևը: **Շղակա գիարեթ**: Շղակը հայաբնակ գյուղ էր Տարոնի հարավ-արևելքում Մառնիկի հարևանությամբ:

Նուկից մինչև Չուխուր-Նորշեն քրդերը վաղ առավոտից լեռներից հարձակման անցան դեպի Մշո դաշտ: Հասկապես ճնշումը ուժեղ էր Նուկի մոտ, սակայն հայկական դրուժինայի և Մառնիկի հրաձիգների համատեղ ուժերով քրդերը մեծ կորուստներով հետ շարավեցին լեռները:

Ցերեկվա ժամը 3-ի կողմերը Կոտնիի և Նուկի բարձունքների մոտ լեռներից սկսեցին իջնել մոտ 1000 հետիոտն ու հեծյալ քրդեր: Չուխուր-Նորշենից առաջացած մեր աշխարհագրայինների երկու դասակները քրդերի կողմից դուրս մղվեցին Կոտնիից: Մառնիկ գնացող պարենային տրանսպորտը վերադարձավ և շրջանցիկ ճանապարհով ուղղվեց Գյոլ-Բաշի⁵⁷: Ջորահանգրվանային զորամասերի հետ իրականացրած համատեղ գործողություններից հետո քրդերը կրկին հետ մղվեցին լեռներ: Ջորահանգրվանայիններին օգնության ուղարկվեցին հայկական դրուժինայի երկու վաշտեր և նրանց հրամայված էր հարձակվել Կոտնիի վրա: Բացի այդ, ցերեկվա ժամը 4-ին Չխուր-Նորշենից ուղարկվեցին հրաձիգների երկու վաշտեր՝ երկու գնդացիներով ու Մարկա-Կսերանիից կես հարյուրյակ կազակներ: Հրաձիգներին, աշխարհագրայիններին և հայ դրուժինիկներին կարգադրված էր համաձայնեցված գործողություններով հետ մղել քրդերին և թույլ չտալ իջնել հովիտ: Ինչպես վերևում ասվեց, դա կատարվեց:

Քրդերը լեռների լանջերին պահակային պահպանություն էին դրել: Կոտնիից արևմուտք երեկոյան ժամը 7-ին ուժեղ հրաձգություն սկսվեց հայկական դրուժինայի մի մասի և քրդերի միջև:

Որպես շտաբի պետ Բիթլիսի ջոկատում էր Գլխավոր շտաբի կապիտան Գոտովցևը: Բիթլիսում այդ ժամանակ գտնվում էր նաև Դամասկոսում [ռուսական] նախկին հյուպատոս իշխան Շախովսկոյն՝ քրդական նշանավոր տոհմի ներկայացուցիչ Քյամիլ բեյի հետ: Այս վերջին երկուսը Գերագույն գլխավոր հրամանատարի հանձնարարությամբ քարոզում և բանակցություններ էին վարում քրդերի հետ ձգտելով նրանց մեր կողմը գրավել, նրանք քարոզչություն էին ծավալում նաև Քրդստանի ինքնավարության օգտին:

Կապիտան Գոտովցևի կողմից իշխան Շախովսկոյի հետ միասին հարցաքննված Խանից՝ երկու և Խոտիի ուղղությունից փախած մեկ հայերը հայտնեցին՝ առաջին, որ նրանք տեսել են Բիթլիսի գրավումից հետո Խանից հարավ-արևմուտք գտնվող և առ այսօր Կասր գյուղում գտնվող նահանջածներին՝ 5000 ասկյարներ քրդերի և երեք թնդանոթների հետ, որ այդ ջոկատն առաջանում է Խանից հյուսիս գտնվող կիրճ, որոնց առաջապահը կազմված է ասկյարներից ու քրդերից. երկրորդ՝ լսել են, որ Խանից հարավ-արևմուտք գտնվող Ջավիսոգուրում գտնվում են գնդացիներով

⁵⁷ **Գյոլ-Բաշի** - հայերեն **Էրուս**: Հայաբնակ գյուղ Տարոնի արևելյան Չխուր գավառակում՝ Նեմրոթ լեռնագագաթի արևմտյան ստորոտին:

3000 ասկյարներ, որ այդ ասկյարները Դարդանեյյան դիվիզիայից են (կոչվում է Չանաք-Կալայի ֆիրմակ), որ սպասվում են լրացուցիչ ուժեր և նպատակ ունեն գրոհել Բիթլիսի վրա. երրորդ՝ նրանք Խանից 10 վերստ հարավ գտնվող Թադվանքում լսել են, որ [մարտի] 11-ին մոտեցել են մեկ գումարտակ ասկյարներ, որոնց հետևից գալիս են էլի ասկյարներ, որ [մարտի 13-ին] նրանք պետք է լինեն Խոշտում, ի միջի այլոց, նրանք [հայերը] տեսել են, թե ինչպես են թուրքերը մաքրում Խոշտից դեպի Թադվանքից հարավ ճանապարհը: Իբր ասկյարները պատրաստվում են հարձակվել Կարայի վրա:

Մարտի 14-ին փոխգնդապետ Եգուպովի ջոկատը առավոտյան ժամը 6-ին անցավ հարձակման. առավոտյան նրա ջոկատի մեկ գումարտակից ավելին մարտական կարգի բերվեց: Հարձակումը կատարվում էր [մարտի] 13-ի նման՝ լեռներով նպատակ ունենալով շրջառել հակառակորդի թևերը, որոնք նախորդ օրվա դիրքերի խրամատներն էին զբաղեցնում: Լեռների հաղթահարման համար անհրաժեշտ էր մոտ 5 ժամ: Հակառակորդին կրակոցի հեռավորության վրա մոտեցած մեր զորամասերը ստույգ հաստատեցին, որ դիրքերը զբաղեցնում են թուրքեր և նույնիսկ սպիտակ խալաթներով մարդիկ, որպեսզի շատ քիչ երևան, քանի որ տարածքը ծածկված էր ձյան մեծ շերտով: Փոխգնդապետ Եգուպովը ստիպված էր շատ ջանքեր գործադրել, որպեսզի ապահովի իր թևերն ու թիկունքը, որոնք մշտապես շրջառվում էին քրդերի կողմից:

Ֆոնա Իվանի Նագարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 1-36: Բնագիր: Ձեռագիր

Ռուբեն Օ. Սահակյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատին, կամավորական շարժմանը, Հայոց ցեղասպանությանը առնչվող հիմնահարցերը, ինքնապաշտպանական մարտերի, հայկական ոստիկանության պատմությունը:

Էլ. հասցե – rubensahakian@mail.ru

Summary

THE UNPUBLISHED MEMORIES OF TOVMAS NAZARBEKYAN

Military operations on the Caucasus Front from

July 1914 to April 26, 1916.

Copy-book 10: from February 4 to March 14, 1916.

Ruben O. Sahakyan

Doctor of Sciences in History

Key words – Tovmas Nazarbekyan, Bitlis, Mush, Andranik, Smbat Boroyan, D. Abatsiyev, R. Bekgulyants, S. Zoryan (Rostom), R. Termen, A. Atanasyan, V. de Witt, Z. Mdivani, Sasun.

The 10th notebook of Th. Nazarbekyan's memoirs present the military operations that took place from February 4, 1916 to March 14, the most important of them was the night attack of Bitlis (Baghesh) on February 18-19 (March 2-3).

After the liberation of Mush, the detachment led by General D. Abatsiev, which included General T. Nazarbekyan's military unit, was instructed to capture Bitlis. On the night of February 17-18, 1916, the first attack on Bitlis failed. The Russian troops and the Armenian 1st Druzhina suffered significant losses. T. Nazarbekyan stated that at the beginning of the attack D. Abatsiev had made a mistake by not capturing the heights dominating the city, which was used by the enemy. And only after receiving the replenishment did General D. Abatsiev suddenly take over Bitlis on the night of February 18-19, 1916.

In his memoirs, T. Nazarbekyan refers to the cases of robbery and violence committed by the army after the capture of Bitlis. He notes with surprise that the Armenian volunteers were mainly blamed for this, when the Cossacks and the shooters entered the city first, and finally the volunteers. To be impartial, the commander cites a June 29, 1916 letter from military priest Ruben Bekgulyants. Bringing several examples, the friar categorically denied the rumors about the "illegalities" of the Armenians. In his turn, the general tried to prevent any clashes between the Armenian and Turkish residents of the city.

By the estimation of General N. Korsun, the capture of the city of Bitlis gave an opportunity to control the mountain pass leading to Mesopotamia. The operations in Erzurum and Bitlis significantly eased the situation of the British, who were fighting hard in the Suez Canal.

Russian units were constantly attacked by Kurds. The brigands of the infamous tribal chief Musa Bey were especially prominent. Prince B. Shakhovsky, who had great diplomatic experience, was sent to negotiate with them, even promising to grant autonomy to the Kurds. The Mush detachment under the command of T. Nazarbekyan and the Armenian refugees found themselves in a catastrophic situation, there was no supply, especially bread. The supply was almost stopped. At that difficult moment, Rostom (Stepan Zoryan), who had moved to Western Armenia as the plenipotentiary of the Caucasus branch of the Union of All-Russian Cities, offered his help to the general. He asked T. Nazarbekyan for a guard to find the wheat stored in abandoned Armenian villages. They agreed to share the found supply equally. Thanks to Rostom, the refugees and troops were provided with enough bread.

On March 8, 1916, the secret order of the commander of the 4th Caucasian Army Corps, General V. de Witt, was received, after the reading and analysis of which T. Nazarbekyan concluded that their situation was not that stable, as heavy fighting was expected, whereas his corps was occupying about 100 km front with little force. The Allies had stopped the Gallipoli operation and it was expected that the Turks would start moving regular military units toughened in battles to the Russian-Turkish front.

The preparations of the Ottoman command were evidenced by the intelligence information and the testimonies of the Armenian refugees: Turkish military units and Kurdish bandits were advancing in the direction of Bitlis. Analyzing the received order and information, T. Nazarbekyan concluded that the enemy was preparing to attack Bitlis, therefore on March 13 he sent additional forces to Bitlis.

НЕОПУБЛИКОВАННЫЕ МЕМУАРЫ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте
с июля 1914 г. по апрель 1916.

Тетрадь N 10. с 4 февраля по 14 марта 1916 г.,

Рубен О. Саакян
Доктор ист. наук

Ключевые слова-Товмас Назарбекян, Битлис, Муш, Андраник, Смбат Бороян, Д. Абациев, Р. Бекгулянц, С. Зорян (Ростам), Р. Термен, А. Атанесян, В. де Вит, З. Мдивани, Сасун.

В тетради N 10 мемуаров Т. Назарбекяна представлены военные действия с 4 февраля по 14 марта 1916 г. Среди них наиважнейшим является описание ночного штурма Битлиса (Багеша) с 18 на 19 февраля (2-3 марта).

После освобождения Муша отряду генерала Абациева, в составе которого находилась военная часть генерала Назарбекяна, был поручен захват Битлиса. Первое наступление на Битлис с 17 на 18 февраля 1916 г. провалилось. Русская армия и первая армянская дружина имели существенные потери. Т. Назарбекян констатировал, что в начале наступления Д. Абациев совершил ошибку, не захватив высоты Битлиса, чем и воспользовался противник. И только после пополнения войска генерал внезапным нападением с 18 на 19 февраля 1916 г. освободил город.

В своих мемуарах Назарбекян отмечает случаи мародерства и насилия, совершенные войсками после захвата Битлиса. Он с удивлением отмечает, что в этом обвиняли в основном армянских добровольцев, несмотря на то, что в город первыми ворвались казаки, стрелки и только в самом конце добровольцы. Чтобы быть беспристрастным в качестве доказательства генерал приводит письмо военного священника Рубена Бекгулянца от 29 июня 1916 г. Священник, приведя несколько примеров, категорически отвергает слухи о незаконных действиях армян. Генерал, в свою очередь, старался не допустить каких-либо столкновений между армянским и турецким населением города.

По оценкам генерала Корсуна захват Битлиса дал возможность овладеть горным переходом, ведущим в Междуречье. Операции Эрзерума и Битлиса заметно облегчили положение британцев, ведущих тяжелые бои в районе Суэца.

Русские подразделения постоянно подвергались нападениям со стороны курдов. Особо «отличались» банды пресловутого Муса бека. Для перегово-